ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի ավագ հարկադիր կատարողը՝

1) Ապահովում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը.

2) Իրականացնում է Բաժնի կանոնադրությամբ նախատեսված առանձնակի տեսակի կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողությունները՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և ոլորտը կարգավորող այլ օրենքներին համապատասխան.

3) Բաժնի կանոնադրությամբ նախատեսված կատարողական գործողությունների կատարման ընթացքում իր իրավասության սահմաններում կայացնում է որոշումներ.

4) Նախապատրաստում է իր վարույթներով դիմում-բողոքների պատասխանների նախագծերը.

5) Կատարողական վարույթներով դատական, կատարողական վարույթի կողմերին քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով համագործակցում է Ծառայության իրավաբանական բաժնի հետ.

6) Հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձանց Ծառայության գործառույթներին ծանոթացնելու նպատակով նշանակվում է որպես փորձաշրջանի համակարգող.

7) Ոստիկանության հետ համատեղ մասնակցում է շրջայցերին և այլ միջոցառումներին.

8) Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում: Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: